— Իզուր տոեցիք, նրանք սովորութիւն չունեն փող վեր առնել. մենք, որ նրա բոստանի մօտ նստած ենք, նրա հիւրն ենք:

— Նա խօ մեզ չէ հրաւիրել, — պատասխանեցի ես:

— Միեւնոյն է, այստեղի սովորութիւնն այդպէս է:

Միւսը ասաց.

— Երբ պէտք էր վաղ վճարել, այդ մեր պարտքն էր տալ, որովհետեւ մենք հրաւիրեցինք ձեզ մեզ մօտ:

— Երրորդը նկատեց.

— Դուք չափազանց շատ տոեցիք, պարոն, բերածը մի քանի փարահազիւ կարժէ. այդ պտուղները մեր երկրում խիստ չնչին գին ունեն:

— Ես նրան ընծայեցի, — եղաւ իմ պատասխանը:

Նրանք զարմացած նայեցին իմ վրայ, թէեւ իմ ընծայածը նոյնպէս չնչին բան էր:

Իմ խօսակիցները երեք հոգի էին, որոնցից մէկը մի եկեղեցու երեցփոխան էր, երկրորդը թաղական խորհրդի անդամ էր, իսկ երրորդը՝ մի արհեստաւոր: Երբ ես գնաի նրանց մօտ նստեցի, նրանց խօսակցութեան առարկան մի անցք էր, որ այնօր կատարուել էր առաջնորդարանում: Մի գիւղացի կին չէր կամենում իր ամուսնու հետ ապրել եւ շատ անգամ փախչում էր ծնողների տունը: Գիւղացին գնում էր, ծեծելով բերում էր, բայց ամէն անգամ նոյնն էր պատահում. կինը նրա մօտ մնալ չէր ուզում (պատճառները չպատմեցին ինձ): Վերջապէս, գիւղացին, անճար մնալով, գալիս է քաղաք, դիմում է առաջնորդարան եւ գանգատւում է: Առաջնորդը բերել է տալիս թէ՛ կնոջը եւ թէ՛ ամուսնուն: Դատը վերջանում է այդ կերպով. կնոջը դնում են ամուսնու շալակը, կապում են, յետոյ ծառաներին հրամայում են՝ դալար վարոցներով յիսուն զարկ տալ կնոջը: Երբ ծեծը վերջանում է, ամուսնուն հրամայում են, որ, կնոջն այնպէս շալակն առած, տանէ եւ հասցնէ իր տունը: Ինձ ասացին, որ մինչեւ տուն հասցնելը, որը բաւական հեռու էր քաղաքից, խեղճ կինը գտնւում էր բոլորովին ուշաթափ դրութեան մէջ, սաստիկ գանահարութիւնից:

— Աստուած վկայ, լաւ դատաստան է, — ասացի ես հեգնաբար, — ծեծը անհնազանդ կնոջ պատիժը, իսկ ծեծուած կնոջը իր կռնակն առած տուն տանելը՝ անշնորհք ամուսնու պատիժը, որ չէ կարողացել կնոջը զսպել:

Նրանք իմ խօսքերը ճշմարտի տեղ ընդունելով պատասխանեցին.